

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2018թ.

N-----Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**«ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. «Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային  
կազմակերպությունն անվանափոխել ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ Կոնստանտին  
Օրբեյանի անվամբ՝ «Երևանի «Կոնստանտին Օրբեյանի անվան արվեստի դպրոց»  
համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային  
կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելյանը ծնվել է 1928թ. հուլիսի 29-ին Ռուսաստանի Արմավիր քաղաքում: 1952թ. սովորել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում: 1961թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Էդվարդ Միրզոյանի ստեղծագործական դասարանը: 1956-1992թթ. եղել է Հայաստանի էստրադային նվագախմբի ղեկավարն ու գեղարվեստական ղեկավարը, 1957թ.՝ ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ, 1968թ.՝ վարչության անդամ:

Գրել է «Սիրում եմ քեզ, դու իմ Մոսկվա» (Երգի միջազգային փառատոնի մրցանակ, Բուդապեշտ, 1967թ.), «Երևանյան մեղեդի», «Ռեքվիեմ», «Կեչիների աղմուկը», «Արևիկ» (Չեխոսլովակիայի և Գերմանիայի միջազգային փառատոների մրցանակներ), «Մերը չի ծերանում», «Գալիս ես, գալիս ես», «Երգել, նշանակում է ապրել», «100 երջանիկ ժամեր», «Շնորհակալություն կյանքին», «Հիշեք» և բազմաթիվ այլ երգեր, էստրադային պիեսներ, ջազային կոմպոզիցիաներ:

1966թ. Պրահայի ջազային երաժշտության միջազգային փառատոնում մրցանակի է արժանացել նրա «Պոլիֆոնիկ պրելյուդը» 4 տրոմբոնների և էստրադային նվագախմբի համար: Հեղինակել է դրամատիկ ներկայացումների և կինոնկարների երաժշտություններ: Դարձել է համամիութենական և միջազգային բազմաթիվ երաժշտական մրցույթների ու փառատոների դափնեկիր, եղել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պատվավոր պրոֆեսոր:

Պարգևատրվել է Բուդապեշտի «Կիրիլ և Միֆոդի» (1976թ.), ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» (2003թ.), Արցախի «Մեսրոպ Մաշտոց» (2009թ.), ՀՀ «Պատվո նշան» (2012թ.) շքանշաններով, Սան Ֆրանցիսկոյի Ա.Էյնշտեյնի անվան մեդալով (1996թ.), ՀՀ Գորիս քաղաքի և Երևանի (2008թ.) պատվավոր քաղաքացու կոչումներով: 1974թ. արժանացել է Հայաստանի, 1979թ.՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման:

Մահացել է ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում, թաղված է Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելյանի անվամբ անվանակոչելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի ղեկավարի, Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոցի տնօրինության և մի շարք մտավորականների կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ/ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Օրինակ \_\_\_\_\_

/կազմված 25.01.2018թ. և բաղկացած՝ 2 էջից/

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

**«\_\_\_» \_\_\_\_\_ 2018թ.**

**N \_\_\_-Ա ՈՐՈՇՄԱՍԲ**

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

\_\_\_\_\_ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ**

**ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ**

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ**

**29.03.2007թ.**

Գրանցման թիվ՝ 290.210.03466

Վկայական՝ 03 Ա 075769

ՀՎՀՀ՝ 01805679

01.03.2011թ.-ին գրանցված կանոնադրության

Թիվ \_\_\_\_\_ փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«\_\_\_» \_\_\_\_\_ 2018թ.

**ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՂԵԿԱՎԱՐ**

\_\_\_\_\_

**«ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ»**

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

/Փոփոխություն/

ԵՐԵՎԱՆ 2018

«Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթում և 1-ին կետում «Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Երևանի Կոնստանտին Օրբելյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

2. Կանոնադրության 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«10 Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Երևանի Կոնստանտին Օրբելյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Երևանի Կոնստանտին Օրբելյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ “Ереванская школа искусств имени Константина Орбеляна” общинная некоммерческая организация,

ռուսերեն կրճատ՝ “Ереванская школа искусств имени Константина Орбеляна” ОНКО,

անգլերեն լրիվ՝ “Yerevan art school named after Konstantin Orbelyan” community non commercial organization,

անգլերեն կրճատ՝ “Yerevan art school named after Konstantin Orbelyan” CNCO:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 01.03.2011թ. պետական ռեգիստրում գրանցված «Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

-----